ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«14» հոկտեմբեր 2016թ. No 1836-Ա

ԲԵԼԱՌՈՒՍԻ «ԲՈՐԻՍՈՎՅԱՆ ԲՈՒԺՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԿԵՏՈՏԻՖԵՆ (ԿԵՏՈՏԻՖԵՆԻ ՖՈՒՄԱՐԱՏ), ԴԵՂԱՀԱՏԵՐ, 1ՄԳ, ԲԼԻՍՏԵՐՈՒՄ (30/3X10/)» ԴԵՂԻ 3070216 ՍԵՐԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի եզրակացությունը դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում հաստատված սպեցիֆիկացիայի «տրոհելիություն» կետին չհամապատասխանելու հանգամանքը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել Բելառուսի ««Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ» դեղագործական ընկերության «Կետոտիֆեն, (կետոտիֆենի ֆումարատ), դեղահատեր, 1մգ, բլիստերում (30/3x10/)» դեղի 3070216 սերիայի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Նատալի Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ և «Ալֆա Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերություններին՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված դեղի 3070216 սերիայի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թոփչյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ